ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 08.12.2025 թ. կայացած հարցման կարգով
թիվ 4 նիստի

Ֆակուլտետի գիտական խորհրդի՝ հարցման կարգով նիստի օրակարգը ներառում էր անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ ***Ռիմա Վիկտորի Բաղեյանի*** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):

Ներկայացված հիմնավորումն աշխատանքի նպատակի ու խնդիրների ուրվագծման ու լեզվաբանական հետազոտությունների շրջանակում թեմայի արդիականության ամփոփ նկարագիրն էր: Ատենախոսության թեման՝ ***«Քաղաքական դիսկուրսը որպես լեզվականի, հարալեզվականի և արտալեզվականի փոխներթափանցված ամբողջություն»,*** ընդգրկում է քաղաքական լեզվաբանության տիրույթում խոսքի համակողմանի քննություն, ինչն արդիական է՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ հետազոտությունն իրականացվելու է ինչպես լեզվառճական վերլուծության, այնպես էլ քաղաքական ելույթների առոգաբանական առանձնահատկությունների մակարդակում: Հարկ է ընդգծել նաև բազմաեղանակային ուսումնասիրության հայեցակերպը, ինչը կապահովի կիրառական նշանակություն: Ուսումնասիրության վերլուծական պատկերն առավել կամբողջանա խոսքի ազդեցության ու լսարանին համոզելու լեզվական միջոցների քննության դիտանկյունից: Հիմնավորման մեջ թեկնածության հաստատման նպատակով ներկայացված էին նաև գիտական ղեկավարի տվյալները՝ անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր ***Մեղա Քերոբի Գասպարյան***:

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ որոշեցին հաստատել ատենախոսության թեման և գիտական ղեկավարին:

Ֆակուլտետի գիտական խորհրդի՝ հարցման կարգով նիստի օրակարգը ներառում էր նաև անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ ***Աննա Արտեմի Թարոյանի*** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):

Ներկայացված հիմնավորումը բովանդակում էր ատենախոսության թեմայի արդիականությունն ու հետազոտության պլանը (թեմա՝ ***«Թվային դիվանագիտության հանրալեզվական յուրահատկությունները»):*** Արդիականությունը պայմանավորված է թվային դիվանագիտության զարգացման ներկա աստիճանով, հանրային կարծիքի ձևավորման գործում լեզվի արդյունավետ կիրառման կարևորությամբ: Աշխատանքը

կներառի անգլիալեզու դիվանագիտական խոսքի լեզվական ու հասարակական-քաղաքական առանձնահատկությունների համակողմանի վերլուծություն: Հետազոտության շրջանակում կշեշտադրվի միջազգային հաղորդակցության ոլորտում լեզվի՝ իբրև ազդեցության միջոցի դերը: Հիմնավորման մեջ թեկնածության հաստատման նպատակով ներկայացված էին նաև գիտական ղեկավարի տվյալները՝ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր ***Աննա Տարիելի Կնյազյան***:

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ որոշեցին հաստատել ատենախոսության թեման և գիտական ղեկավարին:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

08.12.2025 թ.